«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Վարսիկ Բաղդասարյան

Ուսումնական հաստատություն՝ Վերին Արտաշատի միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

1.Ներածություն_____3

2.Տարբերակված ուսուցումը՝ որպես նորարարություն----------5

3.Ուսման անհատական մոտեցում _____9

1. Տարբերակված ուսուցման դրական և բացասական կողմերը____12

2. Տարբերակված ուսուցման ռազմավարությունը_____14

3.Ներդասարանային տարբերակում՝ ըստ տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարման_____16

4.Տարբերակված տնային աշխատանքներ_____25

4.Եզրակացություն_____26

5.Գրականության ցանկ_____27

Ներածություն

Յուրաքանչյուր սովորողի գործունեությունը խթանելու, ակտիվացնելու և շարունակաբար զարգացնելու նպատակով կրթության ոլորտում կատարվում են որոշակի բարելավումներ և մշակվում դասավանդման տարբեր մեթոդներ և ռազմավարություններ: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Յուրաքանչյուր ոք պետք է գիտակցի, որ լեզուն մտածողության հիմնական միջոցն է: Մայրենի լեզուն մեզ օգնում է արտահայտել սեփական մտքերն ու հույզերը, շփվել մարդկանց հետ, հասկանալ շրջապատող աշխարհը և մարդկանց, գրական-գեղարվեստական արժեքներին հաղորդակից դառնալ: Լեզուն մեզ բացառիկ հնարավորություն է տալիս դրսևորելու մեր ստեղծագործական ունակությունները: Գրականության և քերականության ուսուցման գլխավոր նպատակը մայրենի լեզվի գերազանց իմացության ապահովումն է: Մայրենի լեզուն կրթության լեզուն է: Ուստի կարևորելով հայոց լեզու և գրականությունառարկաների իմացությունը՝ ես որոշեցի իմ հետազոտական աշխատանքը իրականացնելու համար ընտրել տարբերակված ուսուցումը՝ աշակերտների առաջադիմությունը բարձրացնելու նպատակով:

Հետազոտության համար խնդրի առարկա է հանդիսացել աշակերտների դասին ամբողջական չմասնակցելու հարցը: Իմ մանկավարժական գործունեության ընթացքում ես դասավանդել եմ տարբեր դասարաններում, ուսուցանել եմ զարգացվածություն ունեցող տարբեր աստիճաններ ու մակարդակներ ունեցող աշակերտների, մշտապես փորձել եմ գտնել աշակերտների ուսումնական գործունեությունը խթանող, ակտիվացնող ու զարգացնող մեթոդներ և

ռազմավարություններ: Արդյունքում եկել եմ այն եզրակացության, որ նույն առաջադրանքը մենք չենք կարող հանձնարարել ամբողջ դասարանին և նրանցից նույն արդյունքը պահանջել: Յուրաքանչյուր աշակերտ պետք է իր հնարավորությանը համապատասխան առաջադրանք ստանա:

Տարբերակված ուսուցման խնդիրներն են՝

1. մոտիվացիայի բարձրացումը, որը ստիպում է սովորողին աշխատել, որի ընթացքում ինքը կատարելագործվում է
2. յուրաքանչյուր աշակերտի սովորեցնել իր ունակություններին համապատասխան
3. սովորողին տալ իր գործողությունների ընտրության անկախություն, ստեղծագործականություն, ինքնագնահատում
4. սովորողին պատրաստել բարձրագույն կրթության

Ուսումնական գործընթացում այս խնդիրների լուծման համար արդյունավետ է կիրառել տարբերակված ուսուցում, որի դերն այսօր խիստ կարևորվում է:

Տեղին է հիշել Ալբերտ Էյնշտեյնի այս հայտնի խոսքը.«Մենք բոլորս հանճարներ ենք, բայց եթե դուք պետք է ձկան մասին դատեք նրա ծառը բարձրանալու կարողությամբ, ապա նա ողջ կյանքը կապրի իրեն ամենավերջին անհաջողակը համարելով»: Բացարձակ անընդունակ աշակերտ չկա, յուրաքանչյուր աշակերտի մեջ էլ կան ուժեղ կողմեր, և հմուտ մանկավարժը ուսուցումը պետք է կազմակերպի՝ հիմնվելով այդ կողմերի վրա:

Տարբերակված ուսուցման նպատակներից է ուշադրության կենտրոնում պահել ոչ միայն այն աշակերտներին, ովքեր հետ են մնում կրթական ծրագրերից, այլ նաև նրանց, ովքեր ունեն մեծ հետաքրքրություններ, ընդունակություններ և առաջադիմություն՝ առարկան ավելի խորը ուսումնասիրելու համար: Այդ իսկ պատճառով ես իմ դասաժամերին նման աշակերտների նկատմամբ կիրառեցի տարբերակված ուսուցում:

Տարբերակված ուսուցումը՝ որպես նորարարություն

Ներկա ժամանակներում դպրոցներում լայնորեն կիրառում են տարբերակված ուսուցումը՝ որպես նորարարություն, որը հնարավորություն է տալիս բարելավել յուրաքանչյուր ուսումնառողի կրթական կարիքները՝ իր ունակությունների, շահերի և հնարավորությունների սահմաններում:

Տարբերակված ուսուցում կիրառում են ոչ միայն այն դեպքում, երբ աշակերտներին առանձնացնում են ըստ ունակությունների, այլ նաև այն դեպքում, երբ նրանք չեն կարողանում լիովին յուրացնել ուսումնական ծրագրերը: Օրինակ անհամերաշխ ընտանիքների շատ երեխաներ, ունենալով ոչնորմալ հաղորդակցման խնդիրներ, դպրոցը միակ տեղն է, որտեղ նրանք կկարողանան ձեռք բերել այդ հմտությունները: Տարբերակված ուսուցումն այս դեպքում կբերի բացասական արդյունքների: Այդ իսկ պատճառով առաջարկվում է տարբերակված ուսուցման փոխարեն իրականացնել ինտեգրված ուսուցում: ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի սահմանադրության համաձայն՝ միևնույն դասարանում կարող են սովորել տարբեր հաշմանդամություն , հուզական, նաև վարքագծային խանգարումներ ունեցող երեխաներ: Նրանց հետ պետք է աշխատեն հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, ուսուցչական կոլեկտիվ, որոնք կփորձեն ազդել ոչ միայն երեխաների վրա, այլև նրանց ծնողների հետ աշխատելով՝ ստեղծել հատուկ պայմաններ նրանց զարգացման և ինտեգրման համար: Օրինակ Նիժնի Նովգորոդում ստեղծվել է <<Նորդիս>> դպրոցը՝ հիմարների և թույլ լսողություն ունեցող երեխաների համար, որտեղ նրանք սովորում են խոսել ռուսաց լեզվով, երգել, պարել , անգամ շփվել օտար լեզուներով: Որոշ ժամանակ անց այս երեխաները սկսում են սովորել հանրակրթական դպրոցներում նորմալ երեխաների հետ՝ յուրացնելով դպրոցական ծրագրերը: Պարզապես ինտեգրված ուսուցման ժամանակ պետք է կիրառել համապատասխան գործիքներ:

Հանրակրթության առջև դրված ժամանակակից պահանջները բնութագրվում են ուսուցման մարդասիրական ուղղվածությամբ: Այդ գործընթացն առաջին հերթին դրսևորվում է սուբյեկտ—սուբյեկտ հարաբերությունների ստեղծմամբ, այսինքն՝ աշակերտը դիտարկվում է ոչ թե որպես մանկավարժական ներգործության օբյեկտ,

այլ որպես սուբյեկտ՝ իր ներաշխարհով, արժեքային համակարգով, անհատական առանձնահատկություններով և այլն: Եվ սա բնական է, քանի որ մարդն աշխատում է ստեղծագործաբար, եթե նա ազատ է: Առավել ևս՝ դպրոցականը, որը դեռևս չունի ստեղծագործաբար աշխատելու փորձ, կարողությունների անհրաժեշտ մակարդակ, որպեսզի դառնա ինքնուրույն մտածող, արարող անհատ, նա պիտի իր գործունեությունը ծավալի՝ զգալով ապահով, ազատ ինքնադրսևորման համար իրեն տրված հնարավորությունը:

Ուսուցիչները միշտ խոսում են աշակերտների անհատականության մասին, բայց չկա հստակեցում, թե ինչպես հաշվի առնել սովորողի առանձնահատկությունները:

Դրա համար առաջարկվում է տարանջատել «տարբերակում» և «անհատականություն» հայեցակարգերը: Առաջին հայացքից դրանք նույնն են թվում, բայց դա այդպես չէ: Տարբերակման ժամանակ հաշվի են առնվում սովորողների գերիշխող հատկությունները (խմբի առանձնահատկությունները), իսկ անհատականության ժամանակ հաշվի են առնում տվյալ սովորողի անձնային առանձնահատկությունները: Եվ այստեղ ի հայտ է գալիս տարբերակված ուսուցումը՝ որպես ուսումնառության պայման և միջոց: Ուսումնառություն կազմակերպելիս պետք է հաշվի առնել ուսումնառության ոճերը: Օրինակ ՝ մաթեմատիկական և արվեստի ուղղվածություն ունեցող դպրոցական աշակերտներին խնդրեցին վերարտադրել տարբեր տառատեսակներով և գույներով թվեր: Մաթեմատիկները վերարտադրեցին միայն թվերը, իսկ արվեստագետները՝ գույները և տառատեսակները: Դա է պատճառը, որ նույն նյութն հաղորդելիս պետք է ընտրել տարբեր գործիքներ:

Ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր աշակերտի զարգացման հնարավորությունները, առանձնահատկությունները, հետաքրքրությունները և ուսումնական նյութի բարդությունը: Ինչքան էլ ուսուցիչը լինի հմուտ, ինչպիսի մեթոդներ էլ կիրառի, նա չի կարող բոլոր սովորողների մոտ նույն արդյունքը գրանցել: Այդ իսկ պատճառով առաջ է գալիս տարբերակված ուսուցման անհրաժեշտությունը:

Տարբերակված ուսուցումը կարելի է կիրառել դասապրոցեսի ցանկացած

ժամանակահատվածում, անգամ նոր նյութն հաղորդելուց հետո: Տարբերակված ուսուցման ժամանակ պետք է հաշվի առնել գործողությունների հետևյալ հաջորդականությունը՝ .

1. նյութի ուսումնասիրում
2. տարբեր գործիքների կիրառում
3. տարբեր մակարդակի թեստերի կազմում և գրավոր ներկայացում
4. հին և նոր գիտելիքների միջև կապի ստեղծումը
5. արդյունքների քննարկումը

Տարբերակված ուսուցման ժամանակ յուրաքանչյուր սովորող ունի ակադեմիական նվաճումների գրանցամատյան, որտեղ նա ինքն է գնահատում իր գիտելիքները, ձեռք բերած հմտությունները և այն համեմատում ուսուցչի գնահատականի հետ: Նման եղանակով յուրաքանչյուր սովորող կարող է ստանալ բարձր գնահատական, եթե կատարի իր առջև դրված հանձնարարությունը: Ինքնագնահատումը կարևոր է, քանի որ սովորողը գնահատում է իր սկզբնական արդյունքները՝ ձեռք բերած նոր արդյունքների հետ համեմատելով:(https://forum.armedu.am/)

Տարբերակված ուսուցման ժամանակ ուսուցիչը հնարավորություն ունի ճշգրիտ կերպով կազմակերպել դասապրոցեսը՝ հաշվի առնելով դասապրոցեսի բոլոր էլեմենտները: Բոլոր դասերին տարբերակված ուսուցում կազմակերպելիս շեշտը դրվում է տարբեր մակարդակներով գիտելիքների յուրացման վրա՝ցածր մակարդակից բարձրին անցնելով: Տարբերակված ուսուցում չի նշանակում, որ սովորողների մի մասին տրվում է ուսումնական նյութի մեծ ծավալ, մյուսներին՝ քիչ: Ո՛չ: Ուղղակի յուրաքանչյուր ուսումնառող պետք է յուրացնի ուսումնական նյութի նվազագույն շեմը, իսկ այն սովորողը, որն ունի մեծ պոտենցիալ, չպետք է կորչի՝ մնալով նվազագույն շեմում:

Ուսման անհատական մոտեցում

Վերջին շրջանում զգալիորեն աճել է հանրակրթական դպրոցների ուսուցիչների հետաքրքրությունը դպրոցականների տարբերակված ուսուցման խնդրի նկատմամբ: Եվ այս խնդիրն այսօր արդիական է մնում: Ի՞նչ է տարբերակված ուսուցումը և ուսման անհատական մոտեցումը: Դասարան-դաս համակարգի պայմաններում, երբ դասարանում կան տարբեր կարողություններով, հետաքրքրություններով, տարբեր մտավոր և ֆիզիկական զարգացում ունեցող աշակերտներ, արդյունավետ ուսուցումն ապահովելու համար անհրաժեշտ է կիրառելն տարբերակված մոտեցում:

Տարբերակված ուսուցման նպատակն է ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել միջոցներ՝ նրա հետաքրքրությունների, ընդունակությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու զարգացման համար:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ աշակերտների բոլոր պահանջները բավարարելու ամենարդյունավետ եղանակներից մեկը տարբերակված ուսուցումն է: Շատ հմուտ մանկավարժներ օգտագործում են տարբերակված ուսուցման ռազմավարություն, քանի որ այն թույլ է տալիս բոլոր աշակերտներին ներգրավել դասի մեջ:

Ինչպես գիտենք՝ դասարանները կազմավորվում են ըստ աշխակերտների տարիքի։ Բայց այդ երեխաների նույն տարիքի լինելը չի նշանակում, որ նրանք ունեն զարգացման ու ընդունակության միևնույն մակարդակները։ Ուսունական գործընթացում նրանք ցուցաբերում են գիտելիքների յուրացման տարբեր աստիճաններ և զարգացման տարբեր ձևեր։ Ուսուցիչը այս դեպքում ուսուցումն իրականացնում է՝ հենվելով միջին կարողություններ ունեցող աշակերտների վրա։ Բայց այս երևութն էլ ունի իր բացասական կողմը։ Սա արհեստականորեն կասեցնումէ ուժեղ աշակերտների զարգացումը, նրանք ուսման նկատմամբ հետաքրքրությունը կորցնում են, իսկ թույլ աշակերտները այդպես էլ մնում են։ Հարկ է նշել, որ միջին կարողությունների տեր աշակերտներն էլ իրարից տարբերվում են, ունեն տարբեր հակումներ ու հետաքրքրություններ, հոգեկան գործընթացի զարգացան տարբեր մակարդակներ։

Հետազոտությունից պարզ դարձավ, որ դասի ժամանակ, ուսումնական գործունեության ընթացքում, ուսուցիչը դժվարանում է այդ խմբին առանձնացնել՝ հաշվի առնելով աշակերտների միջև առկա տարբերությունները։ Իսկ դրանք պայմանավորված են մի շարք հանգամանքներով՝ նախնական գիտելիքների տարբերությամբ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչպիսի ընտանիքից է այդ երեխան, նրա բառապաշարը, մտավոր կարողությունները, արժեքային համակարգը, ճանաչողական կարողությունների տարբերությունները՝ ընկալումը, կենտրոնացված ուշադրության տևողությունը, հիշողությունը, մտածողությունը ու լեզուն։

Տարբերակված ուսուցման դեպքում մեր խնդիրն է ուսումնասիրել սովորողների անհատական առանձնահատկությունները և հեշտացնել նրանց ուսուցման գործընթացը։ Ամենակարևորը երեխաների մոտ սովորելու նկատմամբ հետաքրքրություն առաջացնելն է և գիտելիքների բացերը լրացնելու ցանկություն։ Դա անելու համար մենք պետք է հավատանք մեր ուժերին, նշեք նրանց հետ մնալու պատճառները և միասին գտնեք դժվարությունները հաղթահարելու ուղիներ և անպայման նշեք նրանց ամենափոքր հաջողությունները։ Տարբերակված մոտեցումը

թույլ է տալիս սովորողներին անընդհատ զգալ իրենց առաջընթացը, քանի որ նույնիսկ աննշան հաջողությունը ոգեշնչում է երեխաներին, խրախուսում է ավելի լավ աշխատել և մեծացնում է նրանց հետաքրքրությունը գիտելիքների նկատմամբ:(https://coppershop.ru) :

Որքան տարբեր են աշակերտները, այնքան էլ տարբեր են նրանց բնավորությունները:

Տարբեր բնավորության տեր աշակերտներ ունեն տարբեր սովորելու ոճ, մղում, հետաքրքրություններ, վերաբերմունք: Ուստի ժամանակակից ուսուցիչը պետք է նոր մոտեցումներ ու եղանակներ կիրառի՝ փորձելով գտնել մի շարք հարցերի պատասխաններ.

Ինչպե՞ս կարող եմ օգտակար լինել իմ աշակերտին

Ինչպե՞ս կարող եմ ավելի արդյունավետ ուսուցանել

Ինչպե՞ս կարող եմ իմ աշակերտների վերաբերմունքը դպրոցի, դասի և ուսուցչի նկատմամբ ավելի դրական դարձնել:

Տարբերակված ուսուցման հիմքում ընկած է անհատական մոտեցման սկզբունքը, որն էլ մեր ընկալմամբ ենթադրում է յուրաքանչյուր աշակերտի ուսուցման և զարգացման հարաբերակցում: Տարբերակված ուսուցումը ուսումնադաստիարակչական ճկուն գործընթաց է, որը բնութագրվում է սովորողների անհատական ընդունակությունների հաշվառմամբ:

Այս գործընթացի ժամանակ ուսուցիչը ոչ թե աշակերտներին է հարմարեցնում ուսումնական նյութին, այլ ուսումնական նյութն է հարմարեցնում աշակերտներին: Նյութը մշակում է, դարձնում մատչելի յուրաքանչյուր երեխայի համար: Այս մոտեցումը նպաստում է դասարանի համընդհանուր ակտիվացմանը, յուրաքանչյուր աշակերտ իր անելիքն է ունենում: Երբ ուսուցիչը ամբողջ դասարանի առջև դնում է միևնույն առաջադրանքի պահանջ՝ հաշվի չառնելով աշակերտների անհատական, հոգեբանական կարիքները, ապա նա չի ապահովում որակյալ կրթություն, այն է՝ օգնել յուրաքանչյուր աշակերտի առաջ շարժվել ըստ իր կարողությունների ու ընդունակությունների: Այս կարևոր գործոնի անտեսումը հանգեցնում է նրան, որ աշակերտը չի հաղթահարում իր առջև ծառացած դժվարությունները, արդյունքում տուժում են աշակերտները, նվազում է հետաքրքրությունը ուսման հանդեպ, ընկնում է

նրանց ինքնագնահատականը:

Այդ պատճառով էլ անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր աշակերտ զբաղված լինի իր ընդունակություններին համապատասխան հանձնարարությամբ, նույն դասարանի տարբեր աշակերտների համար ուսումնական ծրագրի միևնույն պահանջի համար նախատեսվեն տարբեր հանձնարարություններ: Աշակերտը այս դեպքում կդառնա ավելի ինքնավստահ:

Սակայն շերտավորումը չպիտի դառնա աշակերտներին պիտակավորելու միջոց; Ուղղակի յուրաքանչյուր երեխա պետք է ստանա իր կարողություններին ու հմտություններին համարժեք ծավալի ու բարդության աշխատանք:

<u>Տարբերակված ուսուցման դրական և բացասական կողմերը</u>.

Տարբերակված ուսուցումը ունի իր դրական և բացասական ազդեցությունը սովորողների վրա: Աշակերտների տարբերակումը ուժեղ, միջին և թույլ առաջադիությունների ունի ոչ միայն առավելություններ, այլ նաև թերություններ: Հագեցած դասերը, ծանր ուսումնական նյութերը խթանում են շնորհաշատ աշակերտներին, իսկ այն աշակերտները, որոնք ունեն դանդաղ զարգացման տեմպ. այս պարագայում սովորելու ցանկությունը կորցնում են, և ուսումնառությունը դառնում է ծանր պարտականություն:

Դրական կողմերն են՝

Ուժեղները հնարավորություն են ստանում իրենց զարգացման մեջ առաջընթաց ապրել:

Ուժեղները ավելի ինքնուրույն են դառնում:

Ուժեղ աշակերտները ավելի մոտիվացվում են ուսման նկատմամբ:

Ստեղծվում է հնարավորություն ուշադրություն դարձնել հետ մնացող աշակերտներին և ստուգել նրանց:

Թույլ աշակերտների ինքնագնահատականը բարձրանում է :

Բացասական կողմերն են՝

Թույլ սովորող աշակերտների մոտ նվազում է ուսման շարժառիթը (մոտիվացիան):

Թույլ աշակերտները հնարավորություն չեն ունենում հասնել ուժեղներին:

Ի. Ս. Յակիմանսկին կարծում է, որ ուսուցման սկզբնական շրջանում անհրաժեշտ է ստեղծել երեխայի զարգացման համար այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն կդրսևորի իր կարողությունների բոլոր կողմերով և 7-8-րդ դասարաններում, երբ հստակ երևում է սովորողների ընդունակությունները, կարելի է կիրառել տարբերակված ուսուցում՝ տարբեր մակարդակներով:

Հետազոտությունների արդյունքում համոզվեցինք, որ տարերակված ուսուցումը ունի ավելի շատ դրական, քան բացասական կողմ:

Տարբերակված ուսուցման ռազմավարությունները.

Տարբերակված ուսուցման ժամանակ կիրառվում են ամենատարածված հետևյալ ռազմավարությունները՝

Տարբերակում՝

ըստ առաջադրանքների

- ✓ ըստ ռեսուրսի
- ✓ ըստ ժամանակի
- ✓ ըստ օժանդակության
- ✓ ըստ արդյունքի

Այս ռազմավարություններից յուրաքանչյուրը կարելի է կիրառել ինչպես առանձին, այնպես էլ մի քանիսը միաժամանակ: Օրինակ՝ ուսուցիչը, մշտադիտարկման տակ պահելով իր աշակերտներին, կարող է իր որևէ թույլ առաջադիմության տեր աշակերտին ընդգրկել բարձր առաջադիմություն ունեցող խմբում՝ թույլին հնարավորություն տալով պատասխանել պարզ առաջադրանքների հարցերին: Կամ եթե աշակերտը դժվարանում է գրավոր ներկայացնել առաջադրանքները, ապա կարելի է նրան հնարավորություն տալ պատասխանը ներկայացնել գրաֆիկի կամ որևէ սխեմայի օգնությամբ:

Հաշվի առնելով կրթական կարիքները՝ տարբերակված ուսուցում իրականացնում են նաև կազմակերպչական ռազմավարությունից ելնելով՝միևնույն ունակությունների տեր աշակերտներին նույն հոսքումուսուցանելով:(Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա., 2005):

Իմ կատարած դասի միջոցով ներկայացնում եմ ուսուցման տարբերակումն ըստ առաջադրանքի, որտեղ կիրառել եմ նաև օժանդակություն ըստ անհրաժեշտության ռազմավարությունը: Փորձը կատարել եմ 5-րդ դասարանում: Դասարանում կա 22 աշակերտ: 5 աշակերտի տվեցի առաջին մակարդակի հարցերը, 12 աշակերտի տվեցի 2-րդ մակարդակի հարցերը, 5 աշակերտի՝ 3-րդ մակարդակի հարցերը:

Արդյունքում ունեցանք հետևյալ պատկերը՝

Առարկա՝ Մայրենի

Դասարան՝5—րդ

Թեմա՝ Հ. Թումանյան «Խոսող ձուկը»

Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդման դաս

3-րդ մակարդակ

2-րդ

1-ին

Կարդա՛ ամբողջ տեքստը,փորձի՛ր ստեղծագործա բարպատմել: Փորձի՛ր շարադրել

Կարդա՛ 1– և 2- հատվածներում գլխավոր միտքն առանձնաց

Կարդա՛ ստեղծագործության առաջին հատվածը և



Այսպիսով տարբերակվում է շերտավորված ուսուցման երկու տեսակ՝

ա) արտաքին՝ հատուկ դպրոցներ, կամ դասարաններ, որտեղ ընդգրկվում են որոշակի անհատական ընդունակություններով օժտված աշակերտներ, սեր ու հետաքրքրություն որևէ առարկայի նկատմամբ, բարձր առաջադիմություն ուսման մեջ, բնագիտամաթեմատիկական կամ հումանիտար թեքումով դասարաններ և այլն:

բ) ներքին՝ սա ենթադրում է դասարանի ներսում որոշակի խմբերի կազմավորում, որտեղ աշխատում են քիչ թե շատ նման ընդունակություններ ու կարիքներ ունեցող աշակերտներ:

Տարբերակված ուսուցումն իրականացվում է երեք հիմնական փուլերով.

- Իմանալ յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները,
- Խմբավորել աշակերտներին՝ ըստ իրենց անհատական առանձնահատկությունների,
- Տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընացը:

Այս փուլերից յուրաքանչյուրը դժվար է յուրովի: Յուրաքանչյուր ուսուցիչ ունիիր մոտեցումը աշակերտների խմբերի ընտրության հարցում: Իմ տեսանկյունից՝ ավելի ճիշտ կլինի երեխաներին չբաժանել «թույլների» և «ուժեղների», այլ վերագրել երեք պայմանական խմբի: Այս խմբերը մշտական չեն, դրանց կազմը կարող է փոխվել:

Խումբ 1 - մշտական լրացուցիչ օգնություն պահանջող երեխաներ:Խումբ 2

- երեխաներ, ովքեր կարող են ինքնուրույն հաղթահարել:

Խումբ 3 - երեխաներ, ովքեր կարողանում են կարճ ժամանակում հաղթահարել նյութը և օգնություն ցուցաբերել ուրիշներին:

Ներդասարանային տարբերակում՝ ըստ տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարման

Ներդասարանային տարբերակման ամենատարածված ձևը աշակերտների կողմից տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարումն է:

1-ին մակարդակում աշակերտին հանձնարարվում է կարդալ

ուսումնական նյութը, պատմել՝ առանձնացնելով գլխավոր մտքերը

2-րդ մակարդակում աշակերտին հանձնարարվում է կարդալ ուսումնական նյութը, կազմել պլան և հարցադրումներ։

3-րդ մակարդակում աշակերտին հանձնարարվում է կարդալ ուսումնական նյութը, տալ նյութի համառոտ բնութագրությունը, սեփական դիրքորոշումը արտահայտել։

Աշակերտների անհատական կարողությունները հաշվի առնելով կարելի է ցուցաբերել նման մոտեցում.

Մակարդակ 1

Կարդացած տեքստի բովանդակությունը հասկանալ։

Տեքստում նկարագրված իրադարձությունների հաջորդականությունը հասկանալ։Բառի հիմնական բաղադրիչները իմանալ. արմատ, ածանց

Բառի մեջ կարողանալ տարբերակել արմատն ու ածանցը։

Մակարդակ 2

Հասկանալ կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը;

Դրսևորել վերաբերմունք գործող անձանց, արարքների նկատմամբ։

Իմանալ բառի տեսակներն ըստ կազմության։

Պարզ և բարդ բառերն տարբերակել։

Մակարդակ 3

Կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը հասկանալ։

Դրսևորել վերաբերմունք գործող անձանց, արարքների նկատմամբ, նրանց զգացական ապրումները հասկանալ։

Իմանալ բառի տեսակներն ըստ կազմության։

Տարբերակել պարզ և բարդ բառերը։Աշխատանքը կատարելիս ցուցաբերել ստեղծագործական մոտեցում։

Շերտավորված ուսուցման ժամանակ ուսուցիչն ընտրում է առաջադրանք յուրաքանչյուրի համար: Կան նաև դեպքեր, երբ աշակերտն է ընտրում իր առաջադրանքը; Այս դեպքում ուսուցիչը պարտավոր է նախապես աշակերտներին ներկայացնել առաջադրանքի բարդությունը, բայց ընտրությունը թողնել աշակերտին: Մյուս դեպքում աշակերտները իրենք են որոշում առաջադրանքի բարդությունը, իրենք էլ ընտրում: Իսկ կամավոր ընտրության սկզբունքով կատարվող առաջադրանքները կարող են նաև աշակերտները իրենք գտնել ու առաջարկել: Առաջադրանքները կարող են նպատակաուղղված լինել թեմայի յուրացմանը կամ էլ բացթողումների լրացմանը:

Տարբերակված ուսուցումը հնարավորություն է տալիս աշակերտին որոշել, թե ուսումնական նյութի յուրացման ո՞ր մակարդակը կարող է հաղթահարել: Սակայն անհրաժեշտ պայման է, որ այն չպետք է ցածր լինի պարտադիր նվազագույն մակարդակից, և ուսուցիչը ուսումնական նյութը պետք է ներկայացնի առավելագույն մակարդակով: Եթե մի աշակերտ ցանկանում է առարկան ուսումնասիրել նվազագույն մակարդակով, իսկ մյուսն՝ առավելագույն, ապա այդ հնարավորությունը նա պիտի ստանա:

Այսպիսով, տարբերակումը հաշվի է առնում ոչ միայն աշակերտների ինտելեկտուալ ընդունակությունները, այլև հետաքրքրությունները;

Այսպիսի մի փորձ ևս կատարեցի: Ներկայացրի աշակերտներին առաջադրանքները, իսկ ընտրությունը թողեցի իրենց:

Առարկա՝ Մայրենի դասարան՝5—րդ

Թեմա՝ Հ.Թումանյան «Խոսող ձուկը»

1-ին մակարդակ՝ Գտնե՛լ տրված բառերի հոմանիշները՝ ուռկան, ցամաքած, սաստիկ, երկյուղ,տարակուսանք:

2-րդ մակարդակ՝ Գրե՛լ տրված բառերի հոմանիշները և կազմե՛լ բառակապակցություններ. ուռկան, ցամաքած, սաստիկ, երկյուղ,տարակուսանք:

3-րդ մակարդակ՝ Գտնե՛լ այս բառերի հոմանիշները և կազմե՛լ կապակցված խոսք ուռկան, երկյուղ, սաստիկ, տարակուսանք:

Դասարանի 22 աշակերտից 10-ը ընտրեցի 1-ին մակարդակ, սակայն

հաղթահարելուց հետո անմիջապես անցան 2-րդ մակարդակի հարցին: 2-րդ մակարդակ ընտրեցի դասարանի 10-ը աշակերտ, իսկ 3-րդ մակարդակ միանգամից ընտրեցին 2 աշակերտ: Սակայն քանի որ նրանց տրված էր հնարավորություն հարցը հաղթահարելու դեպքում կատարել մյուս առաջադանքը, արդյունքում ունեցանք հետևյալ պատկերը՝



Շերտավորված ուսուցման ժամանակ որոշակիացվում է գիտելիքի ընկալման 3 մակարդակներ՝

1-ին մակարդակ (նվազագույն մակարդակ) - Մտապահեցի, հասկացա, վերարտադրեցի

2-րդ մակարդակ(միջին մակարդակ) - Յուրացվել է և կիրառվում է միջին իրավիճակում

3-րդ մակարդակ(բարձր մակարդակ) — Յուրացվել է և կիրառվում է ոչ ստանդարտ վիճակում, աշխատանքին մոտենում է ստեղծագործաբար

Ներկայացնեմ մեկ օրինակ իմ կատարած աշխատանքից

Առարկա՝ Մայրենի դասարան՝5—րդ

Թեմա՝ Հ. Թումանյան«Խոսող

ձուկը»

Դասի տիպը՝ Ամփոփման դաս

1-իմ մակարդակ՝ Ստեղծագործության համար նոր վերնագիր գտի՛ր, բացատրի՛ր ընտրությունը։

Բնութագրի՛ր ձկնորսին։

2-րդ մակարդակ՝ նկարագրի՛ր ձկնորսությունը։ Տեքստում գտի՛ր ժողովրդախոսակցական բառերը և դրանք փոխարինի՛ր գրական լեզվին հատուկ ձևերով։

3-րդ մակարդակ՝ Հորինի՛ր զրույց ձկնորսի հետ։ Բացատրիր «Լավությու՛ն արա ու թեկուզ ջու՛րը գցիր, չի կորչի» ասացվածքի իմաստը։

Արդյունքում ստացանք հետևյալ պատկերը՝

1-ին մակարդակը հաղթահարեցին՝ 7աշակերտ

2-րդ մակարդակը հաղթահարեցին՝12աշակերտ,3-

րդ մակարդակը հաղթահարեցին՝ 3աշակերտ



Շերտավորված ուսուցում կարելի է իրականացնել նաև կազմակերպելով խմբային աշխատանք:Այս դեպքում խմբի աշակերտները քննարկում և միասին լուծում են տրված առաջադրանքը: Այսպիսի խմբերը կարող են լինել նույն կամ տարբեր գիտելիքների, կարողությունների և հմտությունների տեր աշակերտներից, կախված նրանից, թե ուսուցիչը ինչ նպատակներ է դրել իր առջև:

Յուրաքանչյուր խմբի աշխատանք ստուգվում է ուսուցչի կողմից՝ ենթարկվելով քննարկման:

Ներկայացնեմ խմբային աշխատանքի մեկ փորձ, որտեղ կիրառել եմ խմբային աշխատանք՝ օգտագործելով նաև ժամանակի տրամադրման ռազմավարությունը:

Առարկա՝ Մայրենի

դասարան՝5—րդ

թեմա՝ Ղ. Աղայան «Եղեգնուհին»

1-ին խումբ՝ ա.Գտե'ք կարմիրով գրված բառերի բացատրությունը:

բ.Բնութագրել թագավորի տղային:

2-րդ խումբ և 3-րդ խումբ՝ ա.Առանձնացրե'ք թագավոր, եղեգնուհին բառերի բաղադրիչները, դրանցով նոր բառեր կազմե՛ք:

բ.Վերարտադրե՛լ հեքիաթի մասերից յուրաքանչյուրի բովանդակությունը:

4-րդ խումբ՝ ա.Բացատրե՛լ խափշիկ բառը: Հատկանիշ ցույց տվող ինչ բառեր կան դրա կողքին: Այդպիսի բառեր ավելացրե'ք և կազմե'ք բառակապակցություններ:

բ.Կազմե՛ք պառավի և խափշիկի երկխոսությունը:

Տվյալ դեպում ունեցանք 4 խումբ , իսկ պատկերը հետևյալ էր՝1-ին խումբ՝ 5 աշակերտ

2-րդ և 3-րդ խումբ՝ 12 աշակերտ

4-րդ խումբ՝ 5 աշակերտ

Այսպիսով՝ տարբերակված ուսուցումը իրականացնելիս հաշվի է առնվում՝

- սովորողի պատրաստակամությունը կամ կարողությունները
- հետաքրքրությունների շրջանակը
- ուսումնառության ոճը

Այսինքն՝ սովորողի մեջ շարունակական զարգացում է տեղի ունենում, մոտիվացիայի դրսևորում և արդյունավետության բարձրացում: Այս դեպքում հիանալի միջոց են Բլումի և Անդերսոնի աստիճանակարգերը: Սա մտածական և իմացական մակարդակների աստիճանակարգ է, համաձայն որի կարելի է իրականացնել տարբերակված ուսուցում: Աստիճանակարգի հիմքում հիշելն է, որպես նվազագույն շեմ, և գնահատելը, ստեղծելը, որպես առավելագույն շեմ:
Այսինքն.

1–ին մակարդակի համար ընտրում ենք տաքսոնոմիայի ստորին հատվածը: Երկրորդ մակարդակի համար՝ միջինը և երրորդ մակարդակի համար ընտրում ենք բուրգի գագաթը, այն է՝ հիշել,գնահատել, ստեղծել

Այս նմուշով ներկայացնեմ 5-րդ դասարանի «Մայրենի» դասագրքից մի օրինակ: Այսպես՝

Առարկա՝ Մայրենի

Դասարան՝5—րդ

Թեմա՝ Ղ. Աղայան «Եղեգնուհին»



Տարբերակված տնային աշխատանքներ

Աշակերտների ինքնուրույն աշխատանքի հիմնական ձևը տնային առաջադրանքն է: Աշակերտներին տրվող տնային հանձնարարությունները բազմազան են ու բազմաբնույթ: Տնային առաջադրանքների գլխավոր առանձնահատկությունը ինքնուրույնության ապահովումն է: Տնային առաջադրանքները հանձնարարելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի աշակերտների ընդունակությունները, հետաքրքրությունները, գիտելիքները:

Շատ ուսուցիչներ մեծ ծավալի տնային առաջադրանք են հանձնարարում ամբողջ դասարանին, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ բոլոր աշակերտները չունեն ընդունակության, զարգացման միևնույն աստիճանները: Տնային առաջադրանքի միջոցով երեխաներին դաստիարարկելը բերում է մի շարք խնդիրներ, օրինակ թույլ կամ միջին կարողությունների տեր երեխան ստիպված է լինում դիմել ծնողի գնությանը՝ այդ մեծ ծավալի տնային առաջադրանքը կատարելու համար:Բայց ոչ բոլոր ծնողներն են ի վիճակի օգնել երեխաներին, շատերը չունեն բավարար գիտելիքներ և ընդունակություններ, առողջական վիճակը լավ չի,տրամադրությունն է ընկած և այլն: Եվ տնային առաջադրանքը երեխաների համար դառնում է տառապանք, քանի որ նրանք չեն կարողանում կատարել այդ առաջադրանքները:

Այսպիսով, ուսուցիչը տնային հանձնարարություն տալուց առաջ պետք է հաշվի առնի յուրաքանչյուր աշակերտի կարողություններն ու հմտությունները, ամեն մեկին իր ուժերի չափով առաջադրանք տա:

Եզրակացություն

Ուսումնասիրելով հետազոտության արդյունքները՝ ես եկա այն եզրահանգմանը, որ տարբերակված ուսուցումը կարող է նպաստել աշակերտների առաջադիմության բարձրացմանը։

Տարբերակված ուսուցումը փորձնական նպատակով կիրառեցի 5-րդ դասարանում։ Եվ տեսա, որ արդյունքները հիանալի են։ Մինչ այդ, դասարանի աշակերտների մի մասն էր մասնակցում դասին, մի մասը՝ մասամբ, իսկ մի մասն էլ ընդհանրապես չէր մասնակցում, անտարբեր էր։ Իսկ տարբերակված ուսուցման ժամանակ, երբ յուրաքանչյուր աշակերտ, իր գիտելիքներին, կարողություններին և հմտություններին համապատասխան հանձնարարություն էր ստանում, սկսում էր ակտիվություն ցուցաբերել և մասնակցում էր դասին։

Տարբերակված ուսուցումը անհատական և խմբային ձևերով փորձեցի և համոզվեցի, որ երկու դեպքում էլ արդյունավետ է՝ կախված դասի նպատակներից և բովանդակությունից։

Համոզվեցի նաև, որ տարբերակված ուսուցումը ունի ավելի շատ դրական, քան բացասական կողմեր։

Ուսուցման այս ձևը արդյունավետ է ոչ միայն թույլ աշակերտների համար, այլ նաև օժտվածների, քանի որ օժտված երեխաները հանձնարարությունը շուտ էին կատարում և անգործ նստում, իսկ երբ նրանք ստացան իրենց գիտելիքներին համապատասխան հանձնարարություն, սկսեցին հետաքրքրությամբ աշխատել։

Շատ կարևոր էր նաև տնային հանձնարարության տարբերակումը։ Սկսեցի յուրաքանչյուր աշակերտի տնային հանձնարարությունը տալ իր հնարավորություններին և ընդունակություններին համապատասխան, որպեսզի տնային հանձնարարության կատարումը չդառնա տառապանք, այլ աշակերտները ինքնուրույն այն կատարեն, չդիմեն ուրիշների օգնությանը։

Ամփոփելով հետազոտական աշխատանքս՝ եկա այն եզրակացության, որ արդի կրթական համակարգում շատ է կարևորվում տարբերակված ուսուցման դերն ու նշանակությունը։ Այն արդի կրթության հիմնաքարերից մեկն է հանդիսանում։

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. ,Մանկավարժություն, Մանկավարժ 2005:

2. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:

3. Մակավարժական միտք 117 ,Զանգակ, 2013:

4. Веденина Татьяна Ивановна ,Дифференциация обучения как важный фактор развития познавательных интересов школников, МОУ <<Нижнеиртышская средняя общеобразовательная школа>>,2007:

5. Зарецкий В. К. ,,Проблемы дифференцированнога обучения и возможности интегразии,, ИПИ, Москва 2004:

6. Зинудин Абасович Абасов , Дифференциация обучения : сущность и формы, Журнал директор школи, 2004:

7. https://forum.armedu.am/forum/

8. https://coppershop.ru/hy/uhod-za-volosami/realizaciya-principov-individualnogo-i-differencirovannogo.html

9. <<Նոր ժամանակի կրթություն>> ՀԿ-ի անցկացրած դասընթացի նյութեր: